



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ № 7-Լ**

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ  
ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ  
25-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը՝

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2009 թվականի դեկտեմբերի 30-ի «Դատական ծառայողի գործունեության գնահատման կարգը, չափանիշները և բնութագրի ձևերը հաստատելու մասին» թիվ 25-Լ որոշմամբ հաստատված հավելվածներում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1) Թիվ 1 հավելվածի 6-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«Պարտադիր զինվորական ծառայությունից վերադարձած դատական ծառայողների գործունեության գնահատումն իրականացվում է նրանց աշխատանքի ներկայանալու օրվանից վեց ամիս հետո՝ մեկշաբաթյա ժամկետում»:

2) Թիվ 2 հավելվածի վերնագրի «ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ» բառերից հետո՝ կենտրոնից, լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «\_\_\_\_\_թթ.» տող:

գնահատման ժամանակահատված

2. Սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հուլիսի 1-ից:

3. Սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ԼՂՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ**

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ**

27 մարտի 2015թ.  
ք. Ստեփանակերտ